ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2025 թվականի թիվ 83-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 17-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» թիվ 422 -Ն որոշման պահանջները՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ամառային զորակոչ կազմակերպելու նպատակով հանձնարարել.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Տավուշի մարզի զինվորական կոմիսարին.

1) 2025 թվականի ամառային զորակոչ անցկացնել սահմանված կարգով 2025 թվականի ապրիլի 21-ից մինչև հուլիսի 31-ը ներառյալ հաստատված գրաֆիկով՝ ապահովելով նախատեսված թվաքանակը,

2) ժամկետային զինվորական ծառայության զորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ նյութերը սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նոյեմբերյանի, Բերդի, Դիլիջանի, Իջևանի բաժիններ:

3) 2025 թվականի ամառային զորակոչի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության զորակոչել նաև օրենքի 19.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն մինչև 2025 թվականի մարտի 1-ը կամավոր հիմունքներով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած իգական սեռի կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասի համաձայն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ցանկություն հայտնած արական սեռի քաղաքացիներին:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նոյեմբերյանի, Բերդի, Դիլիջանի, Իջևանի բաժինների պետերին.

1) ապահովել զորակոչիկների անվտանգ տեղափոխումը և հասարակական կարգի պահպանումը զորակոչային տեղամասերում,

2) ապահովել մարզի տարածքում և մարզի տար ածքից դուրս գտնվող զորակոչիկների որոնումները և նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամասեր,

3) զորակոչի ընթացքում զորակոչիկներին փոխադրող ավտոբուսներին ուղեկցելու համար զորակոչային տեղամասերին կցել պարեկային ծառայության անձնակազմեր:

3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությանը.

1) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման N 2 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Տավուշի մարզի զինվորական կոմիսարի հայտով զինակոչիկների ֆլյուորո /ռենտգեն/ զննում, սոնոգրաֆիկ հետազոտում և կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել մարզի առողջապահական համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով, ֆլյուորո /ռենտգեն/ ժապավեններով և երևակման նյութերով, ինչպես նաև զինված ուժերի համալրման աշխատանքների կազմակերպման ընթացքում կորոնավիրուսի (COVID-19) տարածման և զինված ուժեր ներթափանցման դեպքերի կանխարգելման անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

4. Մարզի համայնքների և կազմակերպությունների /անկախ կազմակերպական և իրավական ձևերից/ ղեկավարներին.

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակներն ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին,

2) իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Տավուշի մարզի զինվորական կոմիսարիատ:

5. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ զորակոչի ընթացքում ընդլայնել ռազմահայրենասիրական աշխատանքների լուսաբանումը զանգվածային լրատվական միջոցների միջոցով:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ինձ:

ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-04-25 16:12:33 GMT+4
Ստորագրված է EKENG-ի կողմից

2025 թ. ապրիլի 25
Ք. Իջևան